

թիւններից: Բայց եթէ նիւթական դժուարութիւններն այս ժամանակաւոր ընտրողական արնտեմը դարձնեն անգործ-նական—Ընդհանուր Վերատեսուչները իրաւունք ունեն աստջադրել երեք վիլայէթների՝ Սրվազի, Սարբերզի և Գիարբեքիի Ընդհանուր Խորհրդների աթոռների բաշխման համար մի այլ համեմատական չափ, որն աւելի է համապատասխանում նոյն վիլայէթների ներկայ կարիքներին և պայմաններին:

Այն բոլոր նահանգներում, որտեղ Ընդհանուր Խորհուրդները պիտի ընտրուեն համեմատական սկզբունքի հիմունքով, փոքրամասնութիւնը պիտի ներկայացուցիչ ունենայ կօմիտէի մէջ (էնջիւմէն):

Եթէ ընդհանուր վերատեսուչները չեն տեսնում արգելադրութիւններ, պիտի գործադրուի հաւասարութեան սկզբունքը, մուսուլմանների և ոչ մուսուլմանների մէջ, երկու հատուածների ռաիկանական և ժանգարմերիական զինուորագրման նկատմամբ այն չափով, ինչ չափով որ պաշտօնատեղերը կ'իթափուրանան:

Երկու հատուածներում հաւասարութեան նոյն սկզբունքը պիտի գործադրուի, որչափ հնարաւոր է, բոլոր միւս հանրային պաշտօնէութեանց բաշխման ժամանակ:

Դաշն 26-ն յունուարի 1914 թ.

## ՊՕՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԸ

Times-ի խմբագրին:

Պարոն Խմբագիր.

Մօտաւորապէս մի տարի առաջ, երբ բարենորոգումների խնդիրը նորից սկսուում էր դրուել Եւրոպայի առաջ, դուք ստացաք մի նամակ, ուր ես ուղղել էի ձեզ, հարցը իր իսկութեան մէջ պարզաբանելու համար և լաւ ճշտելութիւրբանայիւրի պահանջների ընդթը, որոնց դատը պաշտպանելու համար ես ստացել էի յանձնարարութիւն: Հերքելով աւելի կամ պակաս ցնորական հայեցակէտերը, որ վերագրում էին նրանց, ես բարցարձակապէս յայտարարե-

ցի, որ մերժելով անջատական կամ ինքնավարական բոլոր մտածումները, հայկական նահանգների ազգաբնակչութիւնները պահանջում էին մնալ օտոմանցիներ, միայն թէ Բերլինի Դաշնադրութեան մէջ պայմանաւորուած բարենորոգումների ներմուծով վերջ դնեն աւագակային գործողութիւններին, սպանութիւններին և ճողերի գրաւումներին, որոնց ենթակայ էին երկար տարիներից ի վեր, և որ այդպիսով երաշխաւորէին ապահովութիւնն ու արդարութիւնը, որոնք միայն կարող են թոյլ տալ նրանց աշխատել և ապրել խաղաղութեան մէջ:

Երկար ու աշխատալից բանակցութիւններից յետոյ, այսօր կնքուեց համաձայնութիւն Պետութիւնների և Բ. Դրան միջև և որ այնքան երկար ժամանակներից ի վեր այնքան անձկութեամբ սպասուած բարենորոգումները վերջապէս պիտի իրականան, կ' բարեհաճէք թոյլ տալ ինձ, Պարոն Սմբազիր, ՎՊայմզ օրգանի միջոցով արտայայտել այն զգացումները, որոնցով համակուած են բոլոր հայերը այն մտածումով, որ մի նոր դարաշրջան է բացուելու այս գծաբախտ ժողովուրդների համար: Ես կ'ցանկայի յայտնել մեր ամբողջ երախտագիտութիւնը այն Պետութիւններիին, որոնք, Ռուսաստանի վեհանձն նախաձեռնութեամբ, մեր դատը առան իրենց ձեռքը, և Ն. Մ. Սուլթանի կողմավարութեանը, որ ճանաչելով հայերի հաւատարմութիւնը և նրանց համեստ պահանջների օրինականութիւնը, միևնոյն ժամանակ, նախատեսութեան և բարձր քաղաքագիտութեան մի ակտով, հեռացրեց Կայսրութեան գոյութեան սպառնացող վտանգը և ազատեց արևելեան նահանգների ժողովուրդները անհանգուրժելի և անիրաւ տանջանքներից, որ երկար ժամանակներից ի վեր ծանրացած էին նրանց վրայ:

Միայն մենք չ'պիտի ուրախանանք, որովհետև բարենորոգումների հարցը, ինչպէս ևս միշտ յայտարարել եմ, միայն մեզ չի հետաքրքրում. նա ստացել էր եւրոպական շահի ընդթ այն օրից, երբ երևաց որ, առանց մեր բարենորոգումների, Ասիական Թիւրքիայի հողային ամբող-

Ջութիւնը վտանգի մէջ կ'լինի: Այսօր այդ պատահականութիւնը բարեբախտաբար հեռացուած է, եթէ Բ. Դուռը նպաստի բոլոր միջոցներով, բարենորոգումների արդարացի և լրիւ գործադրելուն:

Ուրեմն տեղիք կայ շնորհաւորելու Պետութիւններին, որոնք աներկբայելի համերաշխութեամբ, սկսած այն ժամից, երբ համաձայնութիւն կայացաւ նրանց մէջ, յաջողեցրին ձեռք բերել մի գործնական արդիւնք, որի կարևորութիւնը շեշտելով Եւրոպայի համար չափազանցութիւն չէր լինի: Պէտք է յուսալ, որ նրանք պիտի հետևեն բարենորոգումների գործադրման նոյն ներդաշնակութեան և համերաշխութեան ոգով և պիտի ապահովեն նրա յաջողութիւնը:

Պետութիւնները տուել են թիւրքիային այն տեսակի բոլոր գոհացումներ, որ Դրան արժանապատուութիւնը չ'վերաւորուի: Որոնք են՝ յետ կենսով բոլոր վիլայէթների մի նահանգի վերածելուց, նրանք համաձայնել են նրանց խմբել երկու հատուածների մէջ, ինչպէս խնդրում էր Բ. Դուռը, և միւս կողմից եւրոպական յատուկ պաշտօնեաների գործադրելիք իսկական կոնտրօլը, որ մեր խնդրի հիմքն էր կազմում, թողնուեց մի կողմ:

Ուրեմն Դուռը լիակատար բաւականութիւն ստացաւ այս և սոյնանման ուրիշ կէտերի վերաբերմամբ, որոնց ինքը մի առանձնապատուկ կարևորութիւն էր տալիս, և մենք միայն կարող ենք ուրախանալ, որ զիւանազիտութիւնը, բոլորի շահերը նկատի առնելով, կարողացաւ միելք գտնել, որ չ'վտանգի բարենորոգումների ոչ գործադրութիւնը և ոչ էլ արդիւնաւորութիւնը:

Այժմ մնում է միայն իրականացնել և իմ ներքին համոզմունքս էր, որ Դուռը, նոյնքան շահագրգռուած որքան և հայերը, եռանդով կ'գործադրի այն: Որովհետև ոչ ոք չի կարող կասկածել, որ անկեղծ, լրիւ և անվերապահ բարենորոգումների գործադրութիւնով միայն կ'վերջանայ Հայկական հարցը: Իրօք, նրանց գործադրութիւնը ապահովութեան և արգարութեան վերականգնումն է, պիտի

շահագրգռեն բնական հարստութիւններ և տնտեսական զարգացումը պիտի ապահովուի, այս բոլորը գործունէութիւնների և բնական ուժերի ամբողջութիւնն է, որոնք դրոււմ են Կայսրութեան ծառայութեան տակ, մի խօսքով սա թիւրքիայի վերականգնումն է, որի համար հայերը, իբրև հաւատարիմ հպատակներ և լաւ հայրենասէրներ պիտի աշխատեն իրենց ամբողջ գիտակցութեամբ և իրենց բոլոր ուժերով:

Հաճեցէք ընդունել, պարոն Խմբագիր, յարգանքաց խորին հաւատարիքը:

Նախագահ Հայկական Ազգային Պատուիրակութեան

ՊՕՂՈՍ ՆՈՒԲԱՐ

Փարիզ, 16 փետ. 1914

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ.**

Հայկական բարենորոգումներ! Սա բաւականին հին երգ է: Սան Ստեֆանոյի դաշնագրութեան համաձայն Բ. Պոուսն յանձն է առնում «անչապաղ իրագործել այն բարեօրումներն ու բարենորոգումները, որ պահանջոււմ են տեղական կարիքները Հայոց բնական նահանգներում, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չեքքեզներ և քրդերի դէմ»: 1878 թուի յունիսի 4-ին անգլո-թիւրքական դաշնագրութիւնը առանց այլ և այլի հաստատում է այս համաձայնութիւնները: Այնուհետև Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնը փոխարկուեց Բերլինի դաշնագրութեամբ, որի 61 յօդուածը վերարտադրեց նոյնութեամբ, բառ առ բառ վերոյիշեալ անօրէնութիւնը, աւելացնելով հետևեալ հաստատածը: որ ըստ երեւոյթին վճռական է երևում. «Բ. Պուսը այս նպատակի համար ձեռք առնուած միջոցները պարբերաբար պիտի ծանօթացնի տէրութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վերայ»:

Ըստ երեւոյթին ամենքն էլ բաւարարոււմ են: Թիւրքական կառավարութիւնը մացնելու է բարենորոգումներ-իրօք չափազանց պարզ-որպէսզի դադարեցնի քուրդերի արշաւանքները, յափշտակութիւնները, հայկական երկրի կոտորածները և վերջ դնի վարչական կեղեքումներին, որոնց շնորհիւ կատարոււմ էին վայրագ արարքներ: Եւ այլևս երկիւղալի